COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ԵԴԽԽ(2021)11

Ստրասբուրգ, 2021թ. նոյեմբերի 5

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (ԵԴԽԽ)

ԵԴԽԽ կարծիք թիվ 24 (2021)

Դատական խորհուրդների զարգացումը և դրանց դերն անկախ և անաչառ դատական համակարգերում

ՄԱՍ Ա. Ներածություն և ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը

I. Ներածություն. սույն կարծիքի շրջանակը

1. Դատական իշխանությունն առանցքային դեր է կատարում՝ հանդիսանալով իրավունքի գերակայությամբ[1] առաջնորդվող ժողովրդավարական պետության իշխանության երրորդ ճյուղը: Ժամանակակից պետությունում և աստիճանաբար ավելի փոխկապակցվող Եվրոպայում իր դերը կատարելու համար դատական համակարգը պետք է այնպես կազմակերպվի, որպեսզի երաշխավորի առանձին դատավորների կողմից լիակատար անկախության պայմաններում՝ սահմանափակված բացառությամբ օրենքով, դատական գործերով ազատորեն որոշումներ կայացնելը: Պետք է խուսափել նույնիսկ թվացյալ արտաքին ազդեցությունից և ճնշումից, որպեսզի հասարակությունը կարողանա վստահ լինել, որ դատական ակտերն ընդունվում են այդպիսի անկախության պայմաններում[2]:
2. Իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվող ժողովրդավարական պետությունում անկախ դատական իշխանությունն անհրաժեշտություն է: Բազմաթիվ, թեև ոչ բոլոր անդամ պետություններում դատական իշխանության անկախության պաշտպանության համար պատասխանատու ինստիտուտը դատական խորհուրդն է: 2007 թվականին ԵԴԽԽ-ն ընդունեց իր թիվ 10 (2007) կարծիքը «Հասարակությանը ծառայող դատական խորհրդի վերաբերյալ»: Դատավորների Մագնա Կարտայում[3] և մշակված միջազգային չափանիշներում,

[1] Տե՛ս ԵԴԽԽ-ի թիվ 18 (2015թ.) կարծիքը:
[2] Տե՛ս Եվրոպական միության արդարադատության դատարան (ԵՄԱԴ), *C-83/19* և այլն, 18.5.2021, 196-197-րդ, 205-րդ, 207-րդ, 212-րդ, 231-րդ, 236-րդ կետեր:
[3] ԵԴԽԽ Դատավորների Մագնա Կարտա (2010), կետ 13:

օրինակ՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից մշակված[4], ևս ընդգծվում է այսպիսի խորհուրդների[5] կարևորությունը: Դրանից հետո մի շարք անդամ պետություններում ներդրվել կամ հզորացվել են դատական խորհուրդները[6]: Այդուհանդերձ, վերջին տարիների զարգացումները մարտահրավեր են նաև այս փաստաթղթերում ամրագրված սկզբունքներին ու չափանիշներին[7]: Այս զարգացումները կարևոր են դարձնում թիվ 10 կարծիքում արտահայտված սկզբունքները վերահաստատելը և, ըստ անհրաժեշտության, դրանք լրամշակելը՝ դատական ինստիտուտները խաթարող վերջին քաղաքական իրադարձությունների և եվրոպական դատարանների[8] ընդունած նախադեպային որոշումների լույսի ներքո:

3. Այնուամենայնիվ, անգամ սահմանադրություններով և միջազգային չափանիշներով ամրագրված մանրամասն նորմերն, առանձին վերցրած, բավարար չեն այս սկզբունքները կյանքի կոչելու և արհեստավարժության բարձր չափանիշներով աշխատող անկախ և անաչառ դատական իշխանության հասնելու համար[9]: Դատական իշխանությունը և իշխանության մյուս ճյուղերը, քաղաքական գործիչները, լրատվամիջոցներն ու քաղաքացիական հասարակությունը պետք է միավորեն իրենց ջանքերը՝ երկարաժամկետ աշխատանք տանելով դատական իշխանությունում արհեստավարժության, թափանցիկության և էթիկայի մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ թղթին հանձնված նորմերը վերածելով դատական իշխանության անկախության[10] նկատմամբ հարգանքի մշակույթի ի շահ հասարակության: Ոչ միայն դատական իշխանությունը, այլև յուրաքանչյուր ոք պետք է մասնակիցը լինի այս արժեքների՝ որպես իրավունքի գերակայությամբ ղեկավարվող ժողովրդավարական պետության անհրաժեշտ հիմքի պաշտպանության գործին: Հանրության վստահությունը ձեռք բերելու համար դատական խորհուրդներն իրենց բաժին գործը պետք է կատարեն գերազանց

---

[4] Վենետիկի հանձնաժողով, Իրավունքի գերակայության ստուգաթերթ E. 1 iv-ix; Դատական համակարգի անկախության վերաբերյալ զեկույց, CDL-AD(2010)004 կետ 32, CDL-AD(2007)028, կետ 29:

[5] Գիտական աշխատության համար տե՛ս Դատական խորհուրդների վերաբերյալ հատուկ թողարկումը հրապարակված Գերմանական իրավունքի լրագրում 2018 թվականին, Ջեսիկա Վալշ, Դատական խորհուրդները և ստորին ատյանի դատավորների ազատումն Արգենտինայում, 2019թ., Զուզեպե Ֆերարի, նախատեսվում է հրապարակել Դատական վարչարարության միջազգային լրագրում, Սանդերս/ֆոնԴանվից, Գերմանական իրավունքի լրագիր 19(2018) 769:

[6] ԵՄ, Իրավունքի գերակայության զեկույց 2020, COM(2020) 580 վերջնական EN, էջ՝ 8-10:

[7] Տե՛ս ԵՄ զարգացումներն Իրավունքի գերակայության 2020թ. զեկույցում, COM(2020) 580 վերջնական EN, էջ՝ 10-12; ԵԴԽԽ բյուրո, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դատական համակարգի անկախության և անաչառության մասին զեկույց, (2019), ԵԴԽԽ – ԲՈւ (2020)3, 20-24-րդ կետեր:

[8] Տե՛ս այս իրադարձությունների մասին Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի 2021 թ. զեկույցում, Գլուխ 1, Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը (ՄԻԵԴ), *Ramos Nunes de Carvalho e Sá v. Portugal*, 6. 11. 2018, կետ 144; *Guðmundur Andri Ástráðsson v. Iceland* ([GC], no. 26374/18, 1 12. 2020; *Xero Flor w Polsce v. Poland*, 7.5.2021 – 4907/18, կետ 243-251; Եվրոպական միության արդարադատության դատարանի նախադեպային իրավունքը (ԵՄԱԴ), *ASdJP v. Tribunal de Contas* 27.2.2018 – C 64/16, կետ 42-45; *European Commission v. Poland*, 24.6.2019 – C 619/18, կետ 71-73; *A.K. v. Krajowa Rada Sadownicta*, 19.11.2019, - C 585/18, C-624/18, C-625/18, կետ 120-122. ԵՄԱԴ, *European Commission v. Poland*, 24.6.2019 – C 619/18, կետ 74, 75; ԵՄԱԴ, *A.K. v. Krajowa Rada Sadownicta*, 19.11.2019, - C 585/18, C-624/18, C-625/18, կետ 123, 133-134; *VQ v. Land Hessen*, 9.7.2020 – C2727/19, կետ 54; *Repubblika Il-Prim Ministru v. WY*, 20.4.2021 – C-896/19; C-83/19 and others 18.5.2021:

[9] Վենետիկի հանձնաժողով, Նոր Սահմանադրության նախագծի վերաբերյալ հրատապ միջանկյալ կարծիք, 11-ը դեկտեմբերի 2020թ., Բուլղարիա, CDL-AD(2020)035 կետ 37:

[10] Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, Նոր Սահմանադրության նախագծի վերաբերյալ հրատապ միջանկյալ կարծիք, 11-ը դեկտեմբերի 2020թ., Բուլղարիա, CDL-AD(2020)035 կետ 37; Տե՛ս նաև Holmøyvik/Sanders, Սթրես թեստ եվրոպական դատական համակարգերի համար, ԵԴԽԽ Դատավորների Մագնա Կարտա (2010), կետ 13, Սահմանադրական իրավունքի եվրոպական տարեգիրք, 2019, 287-310:

աշխատանքի միջոցով, որը պետք է իրականացվի հաշվետու[11] և թափանցիկ կերպով ի շահ հանրության:

4. ԵԴԽԽ-ն՝ սույն կարծիքը նախապատրաստելիս անդամ պետություններին ուղարկված հարցաշարին տրված պատասխանների հիման վրա, արձանագրում է, որ անդամ պետությունների միջև մեծ տարբերություն կա ոչ միայն դատական իշխանության կազմակերպական կառուցվածքի, այլ նաև «դատական խորհուրդներ» կոչվող կառույցների մասով: Այս խորհուրդներն իրարից տարբերվում են կազմակերպական կառուցվածքով, անհատական կազմով և գործառույթներով: Մի շարք խորհուրդներ հավասարապես պատասխանատու են դատավորների և դատախազների համար, որոշներն իրավունք ունեն իրականացնել այնպիսի լիազորություններ, որոնք դատավորների ընտրության և ծառայողական առաջխաղացման կամ դատարանների անհատական կազմի միջոցով կարող են մեծ ազդեցություն ունենալ դատական որոշումների վրա: Այսպիսի խորհուրդների կողմից կայացվող այլ որոշումներն ընդամենն ունեն անուղղակի ազդեցություն. այդպիսի որոշումները վերաբերում են դատարանների աշխատանքի կազմակերպմանն, այդ թվում՝ դատարանների շենք-շինությունների ընթացիկ սպասարկմանը, բյուջեին և ՏՀՏ-ին[12]: ԵԴԽԽ-ն ողջունում է անդամ պետությունների բազմազանությունը, քանի որ այն արտացոլում է տարբեր ազգային սահմանադրությունները, իրավական մշակույթները և պատմությունը, և չի ցանկանում առաջարկել խորհրդի որևէ կոնկրետ մոդել:

5. Սույն կարծիքը վերաբերում է անդամ պետությունների այն ազգային կառույցներին, որոնք անկախ են իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերից կամ որոնք ինքնավար են, և ապահովում են անկախ արդարադատության իրականացման գործում դատական իշխանությանն աջակցելու վերջնական պատասխանատվությունը: Սույն փաստաթղթում այդ կառույցները ներկայացված են որպես «դատական խորհուրդներ»[13]: Այնտեղ, որտեղ առկա է դատական խորհուրդը, այն պետք է կազմակերպվի և դրա անհատական կազմը պետք է ձևավորվի այնպես, որ համապատասխանի վերոնշյալ ակնկալիքներին: Ավելին, խորհուրդը պետք է գործի որպես դատական իշխանության դերը և առանձին դատավորների անկախությունն իշխանության մյուս ճյուղերի հետ հարաբերություններում պաշտպանելու, ամրապնդելու և զարգացնելու միջոց:

6. Սույն կարծիքը կազմվել է ԵԴԽԽ նախկին կարծիքների, մասնավորապես թիվ 10 (2007) կարծիքի, ԵԴԽԽ Դատավորների Մագնա Կարտայի (2010) և Եվրոպայի խորհրդի համապատասխան փաստաթղթերի, մասնավորապես, Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայի (1998) և «Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին» Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)12 առաջարկության հիման վրա: ԵԴԽԽ աշխատանքային խումբը մեծապես օգտվել է տիկին Նուրիա Դիազ Աբադի (ԴԽԵՑ-ի նախկին նախագահ, Իսպանիայի դատական խորհուրդ) և պարոն Քիս Ստերկի (ԴԽԵՑ-ի նախկին նախագահ, Նիդերլանդների դատական խորհրդի նախկին անդամ) ներդրումից համատեղ սեմինարին: Կարծիքում նաև հաշվի են առնվել ԵԴԽԽ անդամների պատասխանները դատական խորհուրդների զարգացման և անկախ ու անկողմնակալ դատական համակարգերում դրանց դերի վերաբերյալ հարցաշարին, այդ պատասխանների ամփոփագիրը և Եվրոպայի

[11] ԵԴԽԽ Դատավորների Մագնա Կարտա (2010), կետ 13:

[12] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 10 (2010) կարծիքը, 43-47-րդ կետեր:

[13] Այս նկարագրությունն օգտագործվել է ԴԽԵՑ-ի կողմից՝ https://www.encj.eu/index.php/:

խորհրդի կողմից նշանակված ԵԴԽԽ փորձագետ-գիտնական, դոկտոր-պրոֆեսոր Էնն Սանդերսի (Գերմանիայի Բիլֆիլդի համալսարան, Նորվեգիայի Բերգենի համալսարան) կազմած նախնական փաստաթուղթը:

II. ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը՝ որպես սկզբնակետ

7. Սույն կարծիքը վերահաստատում և լրացնում է թիվ 10 (2007) կարծիքը: Ուստի, թիվ 10 (2007) կարծիքում առաջարկվող հիմնական սկզբունքները ելակետային են սույն կարծիքի համար և, հետևաբար, մեջբերված են ամբողջությամբ:

8. Այսպիսով, Հասարակությանը ծառայող դատական խորհրդի վերաբերյալ թիվ 10 (2007) կարծիքում ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս հետևյալը.

Ա. Ընդհանուր առմամբ՝

ա) կարևոր է ստեղծել հատուկ մարմին, ինչպիսին դատական խորհուրդն է, որը կոչված կլինի պաշտպանելու դատավորների անկախությունը՝ որպես իրավունքի գերակայությամբ կառավարվող պետության կարևոր տարր, և այդպիսով պահպանելով իշխանությունների տարանջատման սկզբունքը,

բ) դատական խորհուրդը պետք է պաշտպանի դատական համակարգի և առանձին դատավորների անկախությունը՝ միաժամանակ երաշխավորելով արդարադատության արդյունավետությունն ու որակը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին համահունչ՝ արդարադատության համակարգի նկատմամբ հասարակության վստահությունն ամրապնդելու համար,

գ) դատական խորհուրդը պետք է պաշտպանված լինի հոգուտ օրենսդրի կամ գործադրի՝ իր ինքնավարության սահմանափակման ռիսկից՝ սահմանադրության կամ համարժեք տեքստում համապատասխան ամրագրման միջոցով:

Բ. Դատական խորհրդի կազմի վերաբերյալ՝

ա) անձնական շահի, ինքնապաշտպանության և ծանոթությամբ պաշտոնի նշանակման ընկալում թույլ չտալու և հասարակության տարբեր տեսակետներն արտացոլելու նպատակով դատական խորհուրդը պետք է ունենա խառը կազմ, որի զգալի մեծամասնությունը պետք է լինեն դատավորներ, նույնիսկ եթե որոշ հատուկ գործառույթներ վերապահվեն բացառապես դատավորներից բաղկացած կազմին: Դատական խորհուրդը կարող է նաև բաղկացած լինել բացառապես դատավորներից,

բ) անկախ նրանից դատավոր են, թե ոչ, ապագա անդամները պետք է նշանակվեն իրենց մասնագիտական կարողությունների, փորձի, դատական կյանքի և անկախության մշակույթի ընկալման հիման վրա: Նրանք նաև չպետք է լինեն ակտիվ քաղաքական գործիչներ կամ գործադիր կամ օրենսդիր իշխանությունների անդամներ,

գ) դատավոր անդամները պետք է ընտրվեն դատավորների կողմից՝ առանց քաղաքական իշխանությունների կամ դատական հիերարխիաների կողմից որևէ

միջամտության, և դատական իշխանության լայն ներկայացվածությունը երաշխավորող մեթոդներով. եթե դատավորի ընտրությունը կատարվում է ուղիղ ընտրության միջոցով, ապա դատական խորհուրդը պետք է հրապարակի կանոններ, որոնք ուղղված կլինեն արդարադատության համակարգի նկատմամբ հասարակության վստահությանը սպառնացող ցանկացած ռիսկի նվազեցմանը,

դ) իրավաբանի մասնագիտական փորձ ունեցող կամ չունեցող դատավոր չհանդիսացող անդամների նշանակումը պետք է վստահվի քաղաքական մարմին չհանդիսացող կառույցի. եթե, այդուհանդերձ, նրանք ընտրվում են խորհրդարանի կողմից, ապա նրանք չպետք է լինեն պատգամավորներ, պետք է ընտրվեն որակյալ մեծամասնության կողմից՝ ունենալով ընդդիմադիր ուժերի զգալի աջակցությունը, և պետք է ապահովեն հասարակության բազմաշերտ ներկայացվածությունը դատական խորհրդի ընդհանուր կազմում:

Գ. Դատական խորհրդի գործունեության վերաբերյալ՝

ա) անդամները կարող են աշխատել լրիվ դրույքով, սակայն պետք է սահմանափակում դնել, թե քանի անգամ և ինչ ժամանակահատվածով կարելի է պաշտոնավարել, որպեսզի դատարանի պրակտիկայի հետ կապը չխզվի. դատական խորհրդի անդամներին (դատավորներ և ոչ դատավորներ) պետք է տրամադրվեն երաշխիքներ իրենց անկախության ու անաչառության ապահովման համար,

բ) դատական խորհուրդը պետք է կառավարի իր սեփական բյուջեն և ֆինանսավորվի, որպեսզի ապահովի գործունեության օպտիմալությունը և թափանցիկությունը,

գ) դատական խորհրդի որոշ որոշումներ պետք է հիմնավորված լինեն և ունենան պարտադիր ուժ՝ դատական կարգով բողոքարկման հնարավորությամբ,

դ) որպես արդարադատության համակարգի նկատմամբ հանրության վստահության էական տարր՝ դատական խորհուրդը պետք է գործի թափանցիկ և հաշվետու լինի իր աշխատանքների համար, մասնավորապես, պարբերական հաշվետվությունների միջոցով՝ առաջարկելով արդարադատության համակարգի գործունեության բարելավմանն ուղղված միջոցներ:

Դ. Դատական խորհրդի լիազորությունների վերաբերյալ.

ա) դատական խորհուրդը պետք է ունենա խնդիրների լայն շրջանակ՝ ուղղված դատական իշխանության անկախության և արդարադատության արդյունավետության պաշտպանությանն ու խթանմանը. այն նաև պետք է ապահովի, որ իր տարաբնույթ խնդիրների իրականացման ընթացքում դատական խորհրդում չառաջանան շահերի բախումներ.

բ) նախընտրելի է, որ դատական խորհուրդը իրավասու լինի դատավորների ընտրության, նշանակման և ծառայողական առաջխաղացման հարցում. այս ամենը պետք է իրականացվի օրենսդրից կամ գործադրից բացարձակ անկախության, ինչպես նաև դատավորների ընտրության չափանիշների առումով բացարձակ թափանցիկության պայմաններում,

գ) դատական խորհուրդները պետք է ակտիվ ներգրավված լինեն արդարադատության որակի գնահատման և դատավորների աշխատանքի արդյունավետությունն ապահովող մեթոդների իրականացման գործընթացում, սակայն չպետք է հանդես գան դատավորների անհատական գնահատումն իրականացնող համապատասխան դատական մարմնի փոխարեն,

դ) դատական խորհրդին կարող են վերապահվել էթիկայի հարցերը. այն կարող է նաև անդրադառնալ դատարանից օգտվողների բողոքներին,

ե) դատական խորհրդին կարող է վերապահվել վերապատրաստման դասընթացների կազմակերպման և վերահսկման գործառույթ, սակայն ուսումնական ծրագրերի մշակումը և իրականացումն ուսումնական կենտրոնի գործառույթն է, որի հետ նա պետք է համագործակցի նախնական ուսուցման և վերապատրաստման որակն ապահովելու նպատակով,

զ) դատական խորհուրդը կարող է ունենալ ընդլայնված ֆինանսական լիազորություններ դատական համակարգին հատկացվող բյուջեի շուրջ բանակցություններ վարելու և բյուջեի կառավարումն իրականացնելու նպատակով, ինչպես նաև տարբեր դատարանների ղեկավարման ու կառավարման հետ կապված լիազորություններ՝ արդարադատության որակը բարձրացնելու նպատակով,

է) դատական խորհուրդը կարող է նաև լինել համապատասխան կառույցն արդարադատության իմիջի խթանման և պաշտպանության հարցում լայն դերակատարում ունենալու առումով,

ը) նախքան խորհրդարանական լսումները դատական խորհրդի հետ պետք է քննարկվեն բոլոր այն օրենսդրական նախագծերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ դատական համակարգի, մասնավորապես, դատական համակարգի անկախության վրա, կամ որոնք հնարավոր է նվազեցնեն քաղաքացիների՝ արդարադատության մատչելիության երաշխիքը,

թ) եվրոպական և միջազգային մակարդակներում համագործակցությունը տարբեր դատական խորհուրդների հետ պետք է խրախուսվի:

Մաս Բ. ԵԴԽԽ-ի թիվ 10 (2007) կարծիքի լրացում և վերահաստատում

Ի. Դատական խորհրդի լեգիտիմությունը և հաշվետվողականությունը

9. Մի շարք անդամ պետություններում հարցականի տակ է դրվել դատական խորհուրդների լեգիտիմությունը, գործառույթները, կազմը և հաշվետվողականությունը՝ հանգեցնելով օրենսդրական փոփոխությունների, որոնք ազդել են խորհուրդների իրավասությունների, կազմի, լիազորությունների և գործառույթների վրա: Խորհուրդների լեգիտիմությունը գերկարևոր է իրավունքի գերակայության պահպանման գործում: Ուստի, ԵԴԽԽ-ն ցանկանում է ընդգծել իր աղբյուրները: ԵԴԽԽ-ն նախկինում արդեն բացատրել է, որ դատական իշխանության լեգիտիմությունը և հաշվետվողականությունը պետք է անբաժան

լինեն[14]: ԵԴԽԽ-ն տարբերակում է առանձին դատավորների լիազորությունների և դատական համակարգի լեգիտիմության երկու աղբյուր: *Ֆորմալ կամ սահմանադրական լեգիտիմությունը* ստեղծվում է տվյալ անդամ պետության Սահմանադրությամբ և դատավորների նշանակման օրինականությամբ[15]: *Ֆունկցիոնալ լեգիտիմությունը* հիմնված է հանրության վստահության վրա, որը ձևավորվում է գերազանց աշխատանքի, թափանցիկության և հաշվետվողականության միջոցով:[16] Լեգիտիմության այս երկու աղբյուրները վերաբերելի են նաև դատական խորհուրդներին:

1. Լեգիտիմություն, ներառյալ՝ իրավական հիմքերը և իրավական պաշտպանության միջոցները

10. ԵԴԽԽ-ն վերահաստատում է, որ խորհրդի և վերջինիս հիմնական տարրերի իրավական հիմքերը պետք է ամրագրվեն սահմանադրությամբ[17]՝ որպես դրա պարտականությունների, անկախության և լեգիտիմության ապահովման իրավական հիմք[18]: Այն պետք է վերաբերի խորհրդի կազմին և գործառույթներին, խորհրդի անդամների պաշտոնավարման երաշխավորմանը՝ ներառյալ իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերից անկախության երաշխիքներին[19]: Այլ մանրամասները կարող են ամրագրվել օրենքով:

11. Այդուհանդերձ, խորհրդի անկախության վերաբերյալ անորոշ խոստումները, անգամ եթե դրանք ամրագրված են սահմանադրությամբ, բավարար չեն: Յուրաքանչյուր դատական խորհուրդ պետք է տնօրինի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, որոնք կերաշխավորեն իր ինքնավարությունը և հնարավորություն կտան վիճարկելու խորհրդի կամ դատական համակարգի վրա ազդող՝ իշխանության գործողությունները: Լավ օրինակ է Սահմանադրական դատարանում կամ համարժեք կառույցում վարույթ հարուցելու իրավունքը: Դատական խորհուրդը նաև պետք է ունենա ներպետական կամ միջազգային դատարաններում որպես կողմ հանդես գալու իրավունք (այդ թվում՝ եթե հնարավոր է, փորձագիտական կարծիք (amicus curiae brief) ներկայացնելու իրավունք):

2. Հաշվետվողականություն

12. Թեպետ սահմանադրության կարգավորումները նախատեսում են լեգիտիմության ֆորմալ աղբյուրը, սակայն դա բավարար չէ. այն պետք է լրացնել ֆունկցիոնալ լեգիտիմությամբ: Յուրաքանչյուր դատական խորհուրդ և դատական համակարգ, որին այն ներկայացնում է, պետք է արժանանան հանրության վստահությանը և աջակցությանն իրենց գերազանց, թափանցիկ աշխատանքով և

---

[14] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 18 (2015) կարծիքը, 12-38-րդ կետերը:
[15] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 18 (2015) կարծիքը, 13-15-րդ կետերը:
[16] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 18 (2015) կարծիքը, 16-19-րդ կետերը:
[17] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը, կետ 11, Վենետիկի հանձնաժողով, Դատական համակարգի անկախության մասին զեկույց, CDL-AD(2010)004, կետ 22:
[18] Դատավորների՝ նշանակման միջոցով ֆորմալ լեգիտիմության մասին տե՛ս ԵԴԽԽ թիվ 18 (2015) կարծիքը, 14-րդ, 15-րդ կետերը:
[19] Տե՛ս ՄԱԿ-ի հատուկ հանձնակատարի զեկույցը դատավորների և իրավաբանների անկախության մասին, Diego García-Sayán (2-ը մայիսի 2018թ.), կետ 42, կայք՝ https://digitallibrary.un.org/record/1637422/files/A_HRC_38_38-EN.pdf.

հաշվետվողականությամբ: Իշխանության մյուս ճյուղերի հետ բախման պարագայում հանրության աջակցությունը մեծամասամբ կախված է լինելու խորհրդի լեգիտիմության ընկալումից:

13. ԵԴԽԽ-ն ցանկանում է վերահաստատել, որ դատական խորհուրդը պետք է դերակատարում ունենա դատական համակարգի թափանցիկ ու հաշվետու աշխատանքի ապահովման հարցում[20]: Ավելին, դատական խորհրդի հաշվետվողականությունն ինքնին ֆունկցիոնալ լեգիտիմության կարևոր աղբյուր է[21]: Որքան ավելի շատ իրավասություններ և պարտականություններ ունենա խորհուրդը, այնքան ավելի է կարևորվում, որ այն պետք է հաշվետու լինի այդ լիազորությունների իրականացման համար:

14. ԵԴԽԽ-ն տարբերակում է *դատական, պատժիչ և բացատրական հաշվետվողականությունը*՝ ոչ միայն առանձին դատավորների և ողջ դատական համակարգի[22], այլև դատական խորհուրդների առնչությամբ:

ա. Դատական հաշվետվողականություն

15. Ինչպես պետության մյուս մարմինները, այնպես էլ դատական խորհուրդն օրենքից վեր չէ: Խորհրդի որոշ որոշումներ ազդում են ՄԻԵԿ-ով պաշտպանվող իրավունքների վրա. օրինակ՝ երբ կայացվում է դատավորի կարիերայի վերաբերյալ որոշում, այդ որոշումը պետք է լինի պատճառաբանված, և դատավորը պետք է ունենա այդ որոշումը դատական կարգով վերանայելու իրավունք[23]: Երբ վերանայվում են Խորհրդի որոշման իրավական հիմքերն անկախ դատարանի կողմից, խորհուրդը կրում է պատասխանատվություն (*դատական հաշվետվողականություն*)[24]: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել խորհրդի որոշումների հիմքերը վերանայող դատարանի անկախությանն ու անաչառությանը, այդ թվում՝ հենց դատական խորհրդից անկախությանը[25]:

բ. Պատժիչ հաշվետվողականություն

16. Դատական խորհրդի անդամները պետք է համապատասխանեն էթիկայի բարձրագույն չափանիշներին և պետք է կրեն պատասխանատվություն իրենց արարքների համար համապատասխան միջոցներով: Նրանք չպետք է անձեռնմխելի լինեն քրեական ընդհանուր օրենսդրությամբ նախատեսված կարգով քրեական հետապնդումից: Ինչպես և դատավորների պարագայում, որոնք կարող են պատասխանատվության ենթարկվել իրենց արարքների համար, սա կարող է

[20] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը, 91-96-րդ կետեր:
[21] ԵԴԽԽ թիվ 18 (2015) կարծիքը, կետ 16, այս լեգիտիմությունը կոչվում է «ֆունկցիոնալ լեգիտիմություն»:
[22] ԵԴԽԽ թիվ 18 (2015) կարծիքը, 26-33-րդ կետեր:
[23] Տե՛ս Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հարցերով ԳՏ և ՎՀ հրատապ կարծիքը որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու նախագծի վերաբերյալ, որոնք վերաբերում են Արդարադատության բարձրագույն խորհրդի անդամների ընտրությանը (նշանակմանը) և ԱԲԽ-ի կարգապահական տեսուչների գործունեությանը (օրենքի նախագիծ թիվ 5068), 5.5.2021 (CDL-PI(2021)004 (Ուկրաինա) 62-րդ, 75-րդ կետեր:
[24] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 18 (2015) կարծիքը, կետ 26:
[25] Տե՛ս ՄԻԵԴ Volkov v. Ukraine – 21722/11, կետ 130, Denisov v. Ukraine –76639/11, կետ 79:

կոչվել *պատժիչ հաշվետվողականություն*[26]: Այդուամենայնիվ, ԵԴԽԽ-ն ցանկանում է ընդգծել, որ այդօրինակ միջոցները պարտադիր կարգավորվում են և կիրառվում այնպիսի եղանակներով, որ թույլ չտան դրանց չարաշահումը՝ խախտելով դատական խորհրդի անկախությունը և գործունեությունը:

17. Դատական խորհուրդները պետք է մշակեն դատավորների և դատավոր չհանդիսացող անդամների մասնագիտական և էթիկական վարքագծի չափանիշներ[27], ինչպես նաև թերացումների քննության ներքին ընթացակարգեր: Խորհրդի անդամները պետք է գործեն այդ չափանիշներին և անկախության, անաչառության ու բարեվարքության արժեքներին համապատասխան[28]: Անդամների կարգապահական և քրեական պատասխանատվությունը պատժիչ հաշվետվողականության կարևոր տարր է: Խորհրդի անդամների՝ արդար դատաքննության, այդ թվում՝ ներկայացուցչի միջոցով հանդես գալու իրավունքը, պետք է հարգել: Այս համատեքստում ընդունված որոշումները պետք է լինեն պատճառաբանված և դատական կարգով վերանայման ենթակա:

գ. Բացատրական հաշվետվողականություն

18. Յուրաքանչյուր դատական խորհուրդ պետք է աշխատի թափանցիկ, պատճառաբանի իր որոշումներն ու ընթացակարգերը և այս կերպ լինի հաշվետու[29]: Դա կարող է կոչվել *բացատրական հաշվետվողականություն:* Այն նաև պետք է բաց լինի քննադատական արձագանքների համար և պատրաստ լինի շարունակական բարելավման: Հաշվետվողականության այս եղանակը հատուկ կարևորություն ունի իշխանության մյուս ճյուղերի և քաղաքացիական հասարակության հետ երկխոսությունում:

II. Դատական խորհուրդների խնդիրները, կազմակերպական կառուցվածքը և կազմը

1. Դատական խորհրդի խնդիրները

19. ԵԴԽԽ-ն ընդունում է, որ դատական խորհրդի մեկ միասնական մոդել գոյություն չունի: Այդուամենայնիվ, յուրաքանչյուր խորհուրդ պետք է ունենա համապատասխան լիազորություններ դատական համակարգի և առանձին դատավորների անկախությունը[30] պաշտպանելու համար, որպեսզի դատավորներն ազատ լինեն դատական գործերով որոշումներ կայացնելիս՝ առանց անհարկի միջամտության թե՛ դատական համակարգի ներսից և թե՛ դրսից[31]: Դատական անկախությունը հատուկ պաշտպանություն է ենթադրում այն որոշումների պարագայում, որոնք ազդում են դատական որոշումների կայացման վրա, օրինակ՝

[26] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 18 (2015) կարծիքը, կետ 33:

[27] Դատավորների համար նախատեսված չափանիշների մասին տե՛ս՝ ԵԴԽԽ թիվ 3 կարծիք, 8-50-րդ կետեր:

[28] Տե՛ս Էթիկայի հանձնաժողովի ստեղծման մասը, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների վերաբերյալ ՎՀ և ԳՏ հրատապ կարծիքը որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու նախագծի վերաբերյալ, որոնք վերաբերում են Արդարադատության բարձրագույն խորհրդի անդամների ընտրությանը (նշանակմանը) և ԱԲԽ-ի կարգապահական տեսուչների գործունեությանը (օրենքի նախագիծ թիվ 5068), 5.5.2021 (CDL-PI(2021)004 (Ուկրաինա) 37-40-րդ կետեր:

[29] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը, կետ 95:

[30] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը, կետ 14:

[31] ԵՄԱԴ, *ASdJP v. Tribunal de Contas* 27.2.2018 – C 64/16, 42-45-րդ կետեր, *European Commission v. Poland*, 24.6.2019 – C 619/18, 71-73-րդ կետեր, *A.K. v. Krajowa Rada Sadownicta*, 19.11.2019, - C 585/18,C-624/18, C-625/18, 120-122-րդ կետեր:

դատավորների ընտրություն, գործերի մակագրում և կարգապահական վարույթներ: Եթե դատական խորհուրդն ունի նման պարտականություններ, ապա այն պետք է ապահովի, որ նման որոշումներն ընդունվեն այնպես, որ պաշտպանվի և բարձրացվի դատական համակարգի անկախությունը:

20. ՄԻԵԴ-ը և ԵՄԱԴ-ն որոշել են, որ դատավորների նշանակման գործընթացը շատ կարևոր է դատական իշխանության անկախության համար[32]: ԵԴԽԽ-ն միշտ հավատարիմ է եղել այդ տեսակետին[33]: Հետևաբար, նշանակման կամ առաջխաղացման նպատակով դատավորների նոր թեկնածուներ ընտրելը կամ առաջարկելը հիմնված արժանիքների վրա շատ կարևոր խնդիր է[34]: Երբ այդ գործառույթը դատական խորհրդինն է, այն պետք է իրականացվի անկախ և հաշվետու կերպով[35]: Դատավորների կարիերայի վերաբերյալ որոշումները չպետք է կայացվեն քաղաքական գործիչներին կամ մյուս դատավորներին հավատարիմ լինելու պատճառով: Դատավորների ընտրության կամ առաջխաղացման կամ դատարանի կազմի միջոցով այս որոշումները մեծ ազդեցություն են ունենում դատարանների ապագա որոշումների վրա: Հետևաբար, որոշումներ կայացնողների կամ առաջարկություններ ներկայացնողների մեծամասնությունը պետք է լինի դատավոր: Այդուամենայնիվ, ԵԴԽԽ-ն ողջունում է ոչ դատավոր անդամների ներգրավվածությունն այս որոշումների կայացմանը, ինչը կբացառի հովանավորչությունը և վերարտադրությունը դատավորների շրջանում:

21. Ցավոք, Եվրոպայում շատ դատավորներ համարում են, որ դատավորների ընտրության և առաջխաղացման վերաբերյալ որոշումները հիմնված չեն միայն արժանիքների վրա[36]: Ուստի, շատ կարևոր է, որ դատական խորհուրդներն աշխատեն հիմնվելով էթիկայի կանոնների և նշանակման ու առաջխաղացման հնարավորինս կոնկրետ օբյեկտիվ չափանիշների վրա և յուրաքանչյուր թեկնածուին գնահատեն թափանցիկ ընթացակարգով, որը կավարտվի պատճառաբանված որոշմամբ: Այն դատավորները, որոնք գտնում են, որ իրենց իրավունքներն անտեսվել են, պետք է ունենան դատական վերանայման իրավունք[37]:

22. ԵԴԽԽ-ն ցանկանում է ընդգծել, որ դատավորների վեթինգը շատ խնդրահարույց է, քանի որ այն կարող է օգտագործվել որպես գործիք և չարաշահվել քաղաքական առումով «անցանկալի» դատավորներից ձերբազատվելու նպատակով[38]: Եթե որևէ անդամ պետություն երբևէ վեթինգի գործընթաց նախաձեռնի, ապա դա պետք է իրականացվի անկախ կառույցի կողմից: Դատական խորհուրդները պետք է կարևոր դեր ունենան այդ գործընթացում՝ պաշտպանելով դատական իշխանության անկախությունը:

---

[32] ՄԻԵԴ, *Ramos Nunes de Carvalho e Sá v. Portugal*, 6. 11. 2018, կետ 144, *Guðmundur Andri Ástráðsson v. Iceland* ([GC], թիվ 26374/18, 1 12. 2020, Xero Flor w Polsce v. Poland, 7.5.2021 – 4907/18, 243-251-րդ կետեր, ԵՄԱԴ, *European Commission v. Poland*, 24.6.2019 – C 619/18, 74, 75-րդ կետեր, ԵՄԱԴ, *A.K. v. Krajowa Rada Sadownicta*, 19.11.2019, - C 585/18, C-624/18, C-625/18, 123, 133-134-րդ կետեր, *VQ v. Land Hessen*, 9.7.2020 – C2727/19, կետ 54, *Repubblika Il-Prim Ministru v. WY*, 20.4.2021 – C-896/19 , 53-րդ, 57-րդ կետեր, դատարանների անկախության պաշտպանության հետընթացի բացառում, 61-64-րդ կետեր:

[33] ԵԴԽԽ թիվ 1 (2001) կարծիքը, 17-45-րդ կետեր:

[34] ԵԴԽԽ թիվ 1 (2001) կարծիքը, ԵԴԽԽ Դատավորների Մագնա Կարտա (2010), կետ 5:

[35] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը, 48-51-րդ կետեր, Վենետիկի հանձնաժողով, Դատական համակարգի անկախության վերաբերյալ զեկույց, CDL-AD(2010)004, կետ 32:

[36] ԴԽԵՑ, 2019 թ., Հետազոտություն դատավորների անկախության վերաբերյալ, 33-34-րդ էջեր:

[37] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 17 (2014) կարծիքը:

[38] ՄԻԵԴ Xhoxhaj v. Albania no. 15227/19, ՎՀ թիվ 868/2016 կարծիքը, 12-ը դեկտեմբերի, 2016թ., Ալբանիա, Amicus Curiae Սահմանադրական դատարանի համար դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին օրենքում (վեթինգի մասին օրենք), ԵԴԽԽ թիվ 21 (2018) կարծիքում՝ կետ 28, օգտագործվում է «լյուստրացիա» եզրույթը:

23. ԵԴԽԽ-ն չի բացառում հենց դատական խորհրդին վեթինգի ենթարկելու հնարավորությունը: Սակայն դա վերջին միջոցն է, և դրա կիրառման պարագայում գործընթացը պետք է իրականացվի անկախ մարմնի կողմից:
24. ԵԴԽԽ-ն արձանագրում է տեղեկատվական տեխնոլոգիաների մեծացող կարևորությունը դատական իշխանության ապագայի համար և խորհուրդ է տալիս, որ դրանց գոյության դեպքում դատական խորհուրդներն այս ոլորտում ունենան դերակատարում, որպեսզի ապագայում պատշաճ կերպով պաշտպանեն դատական իշխանության անկախությունը և երաշխավորեն դատավորների աշխատանքի որակը[39]:
25. ԵԴԽԽ-ի թիվ 10 (2007) կարծիքում և Դատավորների Մագնա Կարտայում խորհուրդ է տրվում դատական խորհուրդներին վերապահել իրավասությունների լայն շրջանակ իրենց կարգավիճակին, ինչպես նաև կազմակերպական կառուցվածքին, գործունեությանը և դատական մարմինների իմիջին վերաբերող բոլոր հարցերի վերաբերյալ[40]: Որքան մեծ է դատական խորհրդի պարտականությունների և իրավասությունների շրջանակը, այնքան ավելի կարևոր է, որ նրա անկախությունը հարգվի իշխանության մյուս ճյուղերի կողմից, որ այն ունենա բավարար միջոցներ և հաշվետու լինի իր գործունեության ու որոշումների համար[41]: Թեև ուժեղ դատական խորհուրդը կարող է պաշտպանել դատական համակարգն ու առանձին դատավորներին, բազմաթիվ պարտականություններ նրանց խոցելի են դարձնում քաղաքականացման համար՝ դատական համակարգի ներսից կամ դրսից: Եթե դատական խորհուրդն իրավասություններ ունի դատարանի կառավարչական հարցերում, ապա այն նաև պետք է ձեռնամուխ լինի դատական համակարգի արդյունավետության բարձրացմանը: Եթե դատական համակարգին վերաբերող իրավասությունները կամ խնդիրները դատական խորհրդի պատասխանատվության շրջանակի մեջ չեն մտնում, ապա այդ հարցերով պետք է զբաղվի դատական համակարգը կամ անկախ մարմինը:
26. ԵԴԽԽ-ն վերահաստատում է իր կարծիքն առ այն, որ նախքան խորհրդարանական քննարկումները կամ օրենսդրական փոփոխությունները դատական խորհրդի հետ պետք է քննարկվեն բոլոր քաղաքականությունները, այդ թվում՝ առաջարկվող այն օրենսդրական նախագծերը, որոնք, ամենայն հավանականությամբ, կազդեն դատական համակարգի վրա (օրինակ՝ դատական համակարգի անկախության վրա) կամ որոնք կարող են նվազեցնել քաղաքացիների համար արդարադատության մատչելիության երաշխիքը[42]:

2. *Դատական խորհրդի կազմը*

27. Թիվ 10 (2007) կարծիքում արդեն իսկ ծավալուն առաջարկություններ են ներկայացվել դատական խորհրդի կազմի և նրա անդամների ու նախագահի իրավասությունների և ընտրության վերաբերյալ[43]: Սույն կարծիքը վերահաստատում է այդ սկզբունքները: Դատական խորհրդի անդամները պետք է ընտրվեն այնպես, որպեսզի խթանեն դատական խորհրդի և դատական համակարգի անկախ և արդյունավետ գործունեությունը և զերծ մնան քաղաքական ազդեցության,

[39] ԵԴԽԽ թիվ 14 (2011) կարծիք, կետ 36:
[40] ԵԴԽԽ Դատավորների Մագնա Կարտա (2010), կետ 13:
[41] ԵԴԽԽ Դատավորների Մագնա Կարտա (2010), կետ 13:
[42] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, կետ 87:
[43] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, 15-36-րդ կետեր:

սեփական շահի կամ ծանոթությամբ պաշտոնի նշանակման որևէ ընկալումից[44]:

28. ԵԴԽԽ-ն տեղյակ է, որ մի շարք անդամ պետություններում դատական խորհրդի կազմում ներառված են ի պաշտոնե խորհրդի անդամներ: Ի պաշտոնե անդամությունն ընդունելի չէ բացառությամբ սահմանափակ թվով դեպքերի, օրինակ, բարձրագույն դատարանի նախագահի պաշտոնի, սակայն խորհրդի կազմում չպետք է ներառվեն օրենսդիր կամ գործադիր իշխանության անդամներ կամ ներկայացուցիչներ[45]: Ի պաշտոնե անդամը, որը դատավոր չէ, չպետք է մասնակցի կարգապահական որոշումների կայացմանը:

29. ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս, որ դատական խորհուրդների կազմերի մեծամասնությունը կազմված լինի դատավորներից, որոնք ընտրվեն դատավորների կողմից: Կազմում կարող են ընդգրկվել այլ անդամներ՝ կախված խորհուրդների գործառույթներից: ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս, որ դատական խորհուրդն ունենա նաև ոչ դատավոր անդամներ, թերևս քաղաքացիներ, որոնք մասնագիտությամբ իրավաբան չեն[46]: Թեև դատավորները միշտ պետք է կազմեն մեծամասնություն դատական խորհրդում, ոչ դատավոր անդամները, որոնք ցանկալի է ունենան ձայնի իրավունք, ապահովում են հասարակության տարբեր շերտերի ներկայացվածությունը՝ այդ կերպ նվազեցնելով կորպորատիվիզմի վտանգը[47]: Քաղաքացիների մասնակցությունը կարող է բարձրացնել լեգիտիմությունը և պայքարել այն ընկալման դեմ, որ դատական համակարգը «բացառապես իրավաբանների գործն է»: ԵԴԽԽ-ն ավելի նրբանկատ մոտեցում ունի այս առնչությամբ, քան նշված է թիվ 10 (2007) կարծիքում:

3. Դատական խորհրդի անդամների և նախագահի ընտրությունը

30. ԵԴԽԽ-ն ցանկանում է ամենայն խստությամբ վերահաստատել, որ անդամների մեծամասնությունը պետք է լինեն դատավորների կողմից ընտրված դատավորներ, ինչը երաշխավորում է դատարանների և ատյանների հնարավորինս լայն ներկայացվածությունը[48], ինչպես նաև տարբեր սեռերի[49] և տարածաշրջանների ներկայացվածությունը: Ընտրված դատավորները պետք է կարողանան մասնակցել դատական խորհրդի աշխատանքներին իրենց աշխատանքային ծանրաբեռնվածությանը համաչափ: Եթե դատական խորհրդի կազմում կան ոչ դատավոր անդամներ, նրանք պետք է կարողանան բավարար ժամանակ հատկացնել մասնակցությանը դատական խորհրդի աշխատանքներին:

31. Անհրաժեշտ է խուսափել խորհրդարանի կողմից դատավոր անդամների ընտրությունից կամ գործադիրի կողմից նշանակումից[50]: Ոչ դատավոր անդամի ընտրությունը խորհրդարանի կողմից, այնուամենայնիվ, կարող է ընդունելի լինել: Որպես այլընտրանք հնարավոր է նաև Փաստաբանների պալատի կամ

---

[44] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, 15-րդ, 16-րդ կետեր: Դատավորներին ընտրող անկախ մարմինների կարևորության մասին տե՛ս՝ ԵՄԱԴ, *A.K. v. Krajowa Rada Sadownicta*, 19.11.2019, - C 585/18, C-624/18, C-625/18, կետ 137-138, C-619/18:

[45] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, 23-րդ, 26-րդ կետեր:

[46] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը, կետ 22:

[47] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, կետ 32:

[48] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, 18-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 30-րդ կետեր:

[49] ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը դատավորների և իրավաբանների անկախության վերաբերյալ, Diego García- Sayán (2-ը մայիսի 2018), կետ 110, հղումը՝ https://digitallibrary.un.org/record/1637422/files/A_HRC_38_38-EN.pdf.

[50] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, կետ 31:

հասարակական կազմակերպությունների կողմից այդ անդամների ընտրությունը կամ առաջադրումը:

32. Անկախ նրանից, թե ինչ եղանակով են ընտրվում կամ նշանակվում անդամները[51]՝ դա չպետք է կատարվի քաղաքական նկատառումներից ելնելով: Այնուամենայնիվ, թեկնածուին ներկայացվող «քաղաքական պատկանելություն» չունենալու պահանջը, թերևս, չափազանց անորոշ է, այնպես որ հղումը կուսակցական անդամակցությանը կամ գործադիր կամ օրենսդիր մարմնում պետական պաշտոններին կամ այլ կոնկրետ օրինակներին կարող է լինել նախընտրելի[52]: Դատական խորհրդի անդամները չպետք է լինեն այլոց իշխանության կամ ազդեցության տակ:

33. Եթե դատական խորհրդի անդամները ընտրվում են խորհրդարանի կողմից, ապա անհրաժեշտ է նախատեսել որակյալ մեծամասնության պահանջ՝ ընդդիմությանը ներգրավելու և կուսակցությունների համագործակցությունը խթանելու նպատակով[53]: ԵԴԽԽ-ն գիտակցում է, որ մեծամասնության վերաբերյալ այս պահանջը կարող է հանգեցնել փակուղու: Ուստի, ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս, որ ներդրվեն այդ փակուղիները հաղթահարելու մեխանիզմներ[54]: Այդպիսի մեխանիզմները չպետք է թույլ տան անհրաժեշտ մեծամասնության շեմի նվազեցում, քանի որ դա կարող է նվազեցնել փոխզիջման հասնելու մեծամասնության պատրաստակամությունը: Ավելին, այդ մեխանիզմը պետք է ապահովի անկախ ընտրություն և կարող է ներառել ընդդիմությանը կամ կոչ անել, որպեսզի այլ հաստատությունների կողմից կատարվի ընտրություն՝ նախնական ցուցակում ընդգրկված թեկնածուներից: Չնայած նման մոդել դեռևս չի ներկայացվել ԵԴԽԽ, այս փակուղին հաղթահարելու համար թեկնածուների ընտրության գործընթացում կարելի է ներգրավել դատավորների:

34. Ընտրության գործընթացը, այդ թվում՝ թեկնածուների կողմից հնարավոր արշավները, պետք է լինի թափանցիկ և երաշխավորի թեկնածուների որակների՝ մասնավորապես նրանց անաչառության և բարեվարքության հաստատումը[55]: Թափուր պաշտոնների հայտարարությունները պետք է լինեն հրապարակային, և անհրաժեշտ է երաշխավորել հավասար հնարավորություններ անկախ թեկնածուների տարբեր խմբերին աջակցելու համար: Դատական խորհրդի

[51] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի և Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համատեղ կարծիքը դատավորների գերագույն խորհրդի կազմի մասով Սահմանադրության լրամշակման նախագծի մասին, մարտի 20, 2020թ., (CDL-AD(2020)001, կետ 57-60:

[52] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, կետ 23, տե՛ս Վենետիկի հանձնաժողովի և Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համատեղ կարծիքը դատավորների գերագույն խորհրդի կազմի մասով Սահմանադրության լրամշակման նախագծի մասին, մարտի 20, 2020թ., (CDL-AD(2020)001, կետ 54: Տե՛ս անթույլատրելիության չափանիշները. Դատախազության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի մասին հրատապ կարծիք, 10-ը մայիսի 2021թ., Մոնտենեգրո (CDL-PI(2021)008, 28-31-րդ կետեր:

[53] Հրատապ կարծիք Դատախազության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի վերանայված նախագծի վերաբերյալ, 10-ը մայիսի 2021թ., Մոնտենեգրո (CDL-PI(2021)008, կետ 40:

[54] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի և Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համատեղ կարծիքը դատավորների գերագույն խորհրդի կազմի մասով Սահմանադրության լրամշակման նախագծի մասին, մարտի 20, 2020թ., (CDL-AD(2020)001, կետ 51, 68: Տե՛ս նաև Վենետիկի հանձնաժողով՝ Վենետիկի հանձնաժողովի կարծիքների, զեկույցների և սահմանադրական արդարադատության ուսումնասիրությունների հավաքածու, (CDL-PI(2020)004, 20-22-րդ էջեր:

[55] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը, կետ 21:

անդամները պետք է ունենան հասանելիություն իրենց գործառույթների իրականացմանը վերաբերելի ողջ տեղեկատվությանը:

35. ԵԴԽԽ-ն ցանկանում է վերահաստատել, որ դատական խորհրդի նախագահը պետք է լինի անաչառ անձ, որը մոտ չէ քաղաքական կուսակցություններին: Հետևաբար, խորհրդարանական կառավարման համակարգերում, որտեղ նախագահը/պետության ղեկավարն ունի միայն ֆորմալ լիազորություններ, որևէ առարկություն չկա, եթե պետության գլուխը նշանակվի դատական խորհրդի նախագահ, մինչդեռ այլ համակարգերում խորհրդի նախագահը պետք է ընտրվի հենց դատական խորհրդի կողմից և լինի դատավոր[56]:

4. Դատական խորհրդի անդամների պաշտոնավարման երաշխիքները

36. Դատական խորհրդի անդամները պետք է ընտրվեն պաշտոնում որոշակի ժամկետով և պետք է օգտվեն իրենց անաչառության և անկախության ապահովման համար անհրաժեշտ պատշաճ պաշտպանությունից[57]: Խորհրդի անդամները պետք է պաշտպանված լինեն ներքին և արտաքին ճնշումներից: Այնուամենայնիվ, բացառությամբ մահվան, թոշակի անցնելու կամ պաշտոնից, օրինակ, կարգապահական վարույթի արդյունքում ազատվելու դեպքերի՝ խորհրդի անդամի պաշտոնավարման ժամկետը պետք է ավարտվի միայն նրա իրավահաջորդի՝ օրենքով սահմանված կարգով ընտրության պարագայում, որպեսզի դատական խորհուրդը հնարավորություն ունենա իրականացնել իր պարտականություններն օրենքով սահմանված կարգով նույնիսկ այն դեպքում, երբ նոր անդամի նշանակումը չի ստացվել խորհրդարանում փակուղու հանգելու պատճառով[58]: ԵԴԽԽ-ն ուշադրությունն է հրավիրում վերընտրվելու հնարավոր ազդեցությանը դատական խորհրդի անդամների անկախության վրա: Սկզբունքորեն, անկախությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է խուսափել լրիվ դրույքով աշխատող անդամների վերընտրությունից ի օգուտ ավելի երկար պաշտոնավարման ժամկետների[59]: Այս առումով, սույն կարծիքը վերահաստատում է թիվ 10 (2007) կարծիքում[60] որդեգրված տեսակետը: Շարունակականությունը և արդյունավետությունը կարող է բարելավվել, եթե բոլոր պաշտոնավարման ժամկետները միաժամանակ չեն լրանում:

37. ԵԴԽԽ-ն ցանկանում է վերահաստատել դատական խորհրդի բոլոր անդամների անփոփոխելիությունը երաշխավորելու կարևորությունը[61]՝ որպես դատական

---

[56] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, կետ 33:

[57] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, կետ 36:

[58] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի և Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության համատեղ կարծիքը Դատական համակարգի և դատավորների կարգավիճակի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի և Գերագույն դատարանի ու դատական իշխանությունների գործունեությունը կարգավորող մի շարք օրենքների վերաբերյալ (օրենքի նախագիծ 3711), Ուկրաինա, հոկտեմբերի 9, 2020թ., (CDL-AD(2020)022, կետ 49:

[59] Անդամ պետությունների պատասխանների համաձայն՝ ամենաերկար ժամկետը վեց տարին է, օրինակ, Սլովենիայում, Ռումինիայում, Հյուսիսային Մակեդոնիայում, Նիդերլանդներում և Հունգարիայում:

[60] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, կետ 34:

[61] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, rec. E I, տե՛ս Վենետիկի հանձնաժողովի և Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համատեղ կարծիքը դատավորների գերագույն խորհրդի կազմի մասով Սահմանադրության լրամշակման նախագծի մասին, մարտի 20, 2020թ., (CDL-AD(2020)001, կետ 55-56: Վենետիկի հանձնաժողովի կարծիքը Դատախազության մասին օրենքի փոփոխությունների նախագծի և կազմակերպված հանցավորության և կոռուպցիոն հարցերով դատախազության մասին օրենքի նախագծի

խորհրդի անկախության առանցքային նախապայման: Դատական խորհրդում նշանակված դատավորները պետք է պաշտպանված լինեն այն նույն երաշխիքներով, որոնք տրված են արդարադատություն իրականացնող դատավորներին, այդ թվում՝ ծառայության և պաշտոնավարման պայմանները, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքը՝ կարգապահական տույժի, լիազորությունների կասեցման և պաշտոնից ազատման պարագայում[62]: Ոչ դատավոր անդամները պետք է ունենան համարժեք պաշտպանություն: Դատավոր և ոչ դատավոր անդամները պետք է օգտվեն նույն անձեռնմխելիությունից, ինչն ամրագրված է թիվ 3 (2002) կարծիքում[63]:

38. Դատական խորհրդի անդամների լիազորությունները կարող են դադարեցվել միայն վարքագծի՝ ապացուցված կոպիտ խախտման հիման վրա այնպիսի ընթացակարգով, որը երաշխավորում է նրանց արդար դատաքննության իրավունքները: Դատական խորհրդի անդամների անդամակցությունը կարող է դադարեցվել անաշխատունակության կամ այն կարգավիճակը կորցնելու դեպքում, որի հիման վրա իրենց ընտրել կամ նշանակել էին որպես խորհրդի անդամ: Եթե դատական խորհուրդն է կամ խորհրդի կազմի հատուկ մարմինն է պատասխանատու այդ որոշման համար, ապա պետք է երաշխավորվի պաշտոնանկ արված անդամի բողոքարկման իրավունքը: ԵԴԽԽ-ն ընդգծում է կարևորությունը, որ պաշտոնավարման դադարեցմանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնող ընթացակարգերը չչարաշահվեն քաղաքական նպատակներով, այլ պահպանեն արդար դատաքննության իրավունքները[64]: Այս առումով սույն կարծիքը զարգացնում է թիվ 10 (2007) կարծիքը:

5. *Դատական խորհրդի ռեսուրսները*

39. Շատ անդամ պետություններ հաղորդում են դատական խորհուրդներում անձնակազմի և ֆինանսական ռեսուրսների պակասի մասին: Հետևաբար, ԵԴԽԽ-ն ցանկանում է վերահաստատել անդամ պետությունների՝ դատական իշխանությանը պատշաճ ռեսուրսներ, այդ թվում՝ դատական խորհուրդներին առանձին ֆինանսական միջոցներ և աշխատակազմ տրամադրելու պարտականությունը[65]:

III. Դատական խորհուրդները հասարակությունում

1. Հարաբերություններն իշխանության մյուս ճյուղերի հետ

40. Խորհրդարանի և գործադիրի ներկայացուցիչները, միանշանակ, պետք է հարգեն օրենքը՝ դատական խորհրդի հետ իրենց հարաբերություններում և չխաթարեն նրա դերն ու գործառույթները՝ խախտելով կամ շրջանցելով իրավական կանոնները:

վերաբերյալ, մայիսի 10, 2021թ., Մոնտենեգրո (CDL-PI(2021)008, կետ 46-49), ըստ ՎՀ-ի թույլատրելի է միայն եթե նոր գործառույթներ են ներդրվում, որոնք զգալիորեն ապաքաղաքականացնում են խորհուրդը:

[62] Տե՛ս Diego García-Sayán, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը դատավորների անկախության և իրավունքի վերաբերյալ, *Grzęda v. Poland*, բողոք թիվ 43572/18, 45-53-րդ կետեր:

[63] ԵԴԽԽ թիվ 3 (2002) կարծիք, 51-77-րդ կետեր:

[64] ԵԴԽԽ թիվ 3 (2002) կարծիք, 58-74-րդ կետեր, ԵՄԱԴ C-83/19 և այլն 18.5.2021, 196-199-րդ, 236-րդ կետեր:

[65] ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիք, 73-75-րդ կետեր, ԵԴԽԽ թիվ 18 (2015) կարծիք, կետ 51, ԴԽԵՑ զեկույց 015/2016 դատական համակարգի ֆինանսավորման մասին:

Ավելին, դատական խորհրդի հետ հարաբերությունները պետք է հիմնվեն իրավունքի գերակայության և համապատասխան անդամ պետությունում դատական խորհրդի դերի նկատմամբ հարգանքի մշակույթի վրա:

41. Դատական խորհուրդները պետք է ակտիվորեն մասնակցեն իշխանության մյուս ճյուղերի հետ երկխոսությանը, հատկապես երբ նրանք կարծիք են հայտնում օրենսդրական նախագծերի վերաբերյալ: Այսպիսի երկխոսությունը պետք է տեղի ունենա փոխադարձ հարգանքի մթնոլորտում:

2. Դատավորների միությունների և քաղաքացիական հասարակության հետ հարաբերությունները

42. Անդամ պետությունները հայտնում են, որ հանրության հետ իրենք հաղորդվում են հատուկ ինտերնետային կայքերի և հաշվետվությունների միջոցով: Որոշ անդամ պետություններ անգամ հայտնում են, որ իրենց լիագումար նիստերը հեռարձակվում են առցանց: ԵԴԽԽ-ն ողջունում է թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանն ուղղված այդ ջանքերը: Այդուամենայնիվ, ԵԴԽԽ-ն ընդունում է, որ շատ դեպքերում, հատկապես դատավորների կարիերային վերաբերող հարցազրույցների և քննարկումների պարագայում, առկա է գաղտնի քննարկումների իրավաչափ շահագրգռվածություն:

43. ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս, որ դատական խորհուրդները երկխոսություն ծավալեն դատավորների միությունների[66], ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ, այդ թվում՝ փաստաբանական պալատների և ՀԿ-ների հետ: Այս երկխոսությունն ընձեռում է հաշվետվողականության կարևոր հնարավորություն: Դատական խորհուրդները պետք է բաց լինեն դրսից հնչող կարծիքներին և քննադատությանը և իրականացնեն տեղեկատվական ու իրազեկման աշխատանքներ, այդ թվում՝ օրինակ գոհունակության հարցումները դատարաններից օգտվողների շրջանում և բողոքների քննության ընթացակարգերը: Այդուհանդերձ, դատական խորհուրդը պետք է միշտ գիտակցի իր հատուկ անկախ դերը և պետք է զգոն լինի լոբբիզմից խուսափելու նպատակով:

44. Շատ կարևոր է, որ հանրությունը տեղեկացված լինի անկախ դատական համակարգի գործառույթների ու կարևորության մասին[67]: Որոշ իրավական համակարգերում դատական վարույթներն արդեն իսկ հեռարձակվում են առցանց, որպեսզի հնարավոր լինի հետևել նիստերին հեռավար կարգով, և ծավալուն տեղեկատվություն է հրապարակվում համացանցում: Ավելին, առանձին դատարաններ կարող են հանրության հետ հաղորդակցվել տեղական մակարդակում: Բայցևայնպես, դատական խորհուրդը պետք է հատուկ դերակատարում ունենա դատական համակարգի ու դրանում իր դերի վերաբերյալ իրազեկման աշխատանքների գործում:

3. Լրատվամիջոցների հետ հարաբերությունները

45. Անդամ պետությունները հաղորդում են, որ լրատվամիջոցների հետ իրենք հաղորդակցվում են մամուլի գրասենյակների, մամուլի հաղորդագրությունների և

[66] Տե՛ս ԵԴԽԽ 23 (2020) կարծիքը, 25-րդ, 29-32-րդ կետեր, առաջարկություն 6:
[67] Տե՛ս ԵԴԽԽ 7 (2005) կարծիքը, 33-54-րդ կետեր, թիվ 10 (2007), 80-86-րդ կետեր:

մամուլի ասուլիսների միջոցով[68]: Անդամ պետությունների բազմաթիվ դատական խորհուրդների համար զեկույցներ ու կարծիքներ հրապարակելը և լրատվամիջոցներին դիմելն իշխանության մյուս թևերի հետ հազորդակցվելու կարևոր գործիքներ են: Հասարակության հետ լրատվամիջոցների միջոցով հաղորդակցվելը կարող է հանդիսանալ հաշվետվողականության և թափանցիկության գերազանց գործիք:

46. Լրատվամիջոցների, հասարակության և իշխանության մյուս թևերի հետ ցանկացած հաղորդակցություն պետք է որպես կարևոր մաս ներառի բացատրությունն առ այն, որ դատական խորհուրդն ու առանձին դատավորները գործերի վերաբերյալ որոշումները կայացնում են ինքնուրույն: Դատական խորհուրդը պետք է վճռականորեն հակազդի առանձին դատավորների կամ ամբողջ դատական համակարգի վրա հարձակումներ կամ ճնշումներ գործադրելու փորձերին: Դատական համակարգի և լրատվամիջոցների միջև ադեկվատ հարաբերություններ խթանելու նպատակով դատական խորհուրդը պետք է կա՛մ հանդես գա որպես միջնորդ դատական համակարգի և լրատվամիջոցների միջև, կա՛մ այդ դերը կատարելու համար ապահովի այլ արդյունավետ գործընթացների առկայությունը:

4. Հարաբերությունները հակակոռուպցիոն մարմինների հետ

47. Կոռուպցիայի դեմ պայքարը շատ կարևոր խնդիր է, քանի որ կոռուպցիան խաթարում է հանրության վստահությունը և դրանով իսկ ամբողջ դատական համակարգի լեգիտիմությունը[69]: Մյուս կողմից, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը և դատական համակարգի անկախության և իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքն իրարից անբաժանելի են: Կոռուպցիայի դեմ պայքարը չի կարող արդյունավետ լինել առանց անկախ դատական իշխանության և իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքի[70]: Նույնիսկ այն պայմաններում, երբ ստեղծվում է կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ կառույց, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարը դատական խորհրդի պատասխանատվության շրջանակում է, դատական խորհուրդը և դրա անդամները պետք է լիարժեք հանձն առնեն դատական համակարգում և դատական խորհրդում կոռուպցիայի դեմ պայքարի համապատասխան բոլորը քայլերին օժանդակելուն: Դատական խորհուրդը նաև պետք է զգոն լինի, որպեսզի թույլ չտա կոռուպցիայի դեմ պայքարի ու կարգապահական վարույթների օգտագործումը քաղաքական դրդապատճառներով դատավորների վրա հարձակումների համար[71]:

IV. Եզրակացություններ և առաջարկություններ

1. Բազմաթիվ անդամ պետություններում դատական խորհուրդները պատասխանատու են դատական իշխանության անկախության պաշտպանության համար: Քաղաքական զարգացումներն անհրաժեշտ են դարձնում դատական խորհուրդների վերաբերյալ թիվ 10 (2007) կարծիքում արտահայտած սկզբունքների և առաջարկությունների վերահաստատումը և, անհրաժեշտության դեպքում, դրանց

[68] Տե՛ս այս կարծիքի նախապատրաստման նպատակով շրջանառված հարցաշարը և ԵԴԽԽ 10 (2007) կարծիքը, կետ 95:
[69] Տե՛ս ԵԴԽԽ 21 (2018) կարծիքը:
[70] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոյի ելույթը՝ «Դեմոկրատիան գործողության մեջ», Զրո կոռուպցիա թեմայով միջոցառմանը, 7-8.6. 2021:
[71] Տե՛ս «սթափեցնող ազդեցությունը» ԵՄԱԴ C-83/19 և այլն 18.5.2021, կետ 236:

լրացումը (2-րդ, 7-րդ, 8-րդ կետեր):

2. Դատական խորհուրդների ստեղծումը և պատշաճ գործունեությունը խրախուսող Սահմանադրությունները և միջազգային չափանիշները բավարար չեն անկախ դատական իշխանություն ձևավորելու համար: Դատական իշխանությունը և իշխանության մյուս ճյուղերը, քաղաքական գործիչները, լրատվամիջոցները և քաղաքացիական հասարակությունը պետք է աշխատեն համատեղ՝ երկարաժամկետ ջանքեր գործադրելով արհեստավարժության, թափանցիկության և էթիկայի մակարդակը դատական իշխանության ներսում բարձրացնելու ուղղությամբ, որպեսզի թղթին գրված օրենքները վերածվեն դատական անկախության և իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքի մշակույթի (3-րդ կետ):

3. Դատական խորհուրդը պետք է իր տրամադրության տակ ունենա իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք կերաշխավորեն իր ինքնավարությունը և կասկածի տակ կդնեն իր կամ դատական համակարգի վրա ազդող հանրային որոշումների օրինականությունը: Դատական խորհուրդները պետք է ունենան ազգային և միջազգային դատարաններում որպես կողմ հանդես գալու իրավունք (11-րդ կետ):

4. Դատական խորհուրդների լեգիտիմության աղբյուրը դրանց իրավական հիմքերն են, սակայն դրանք պետք է լրացվեն հանրության վստահությամբ, որը ձեռք է բերվում թափանցիկության, հաշվետվողականության և ի շահ հասարակության գերազանց աշխատանքի միջոցով (10-րդ, 12-14-րդ կետեր):

5. Որքան լայն է դատական խորհրդին վերապահված պարտականությունների և լիազորությունների շրջանակը, այնքան ավելի կարևոր է, որ դրա անկախությունը հարգվի իշխանության մյուս ճյուղերի կողմից, ունենա բավարար ռեսուրսներ և իր գործողությունների և որոշումների համար լինի հաշվետու (25-րդ, 47-րդ կետեր):

6. Դատական իշխանության բոլոր անդամները պետք է համապատասխանեն էթիկայի և մասնագիտական ամենաբարձր չափանիշներին և պետք է պատասխանատվություն կրեն իրենց գործողությունների համար համապատասխան կարգով (16-րդ, 17-րդ կետեր):

7. Յուրաքանչյուր դատական խորհուրդ պետք է աշխատի թափանցիկ, հիմնավորի իր որոշումներն ու ընթացակարգերը, և այս կերպ լինի հաշվետու: Համապատասխան դեպքերում պետք է հնարավոր լինի վիճարկել դատական խորհրդի որոշումները դատարանում (12-րդ, 15-րդ, 18-րդ կետեր):

8. ԵԴԽԽ-ն ընդունում է, որ դատական խորհրդի համար մեկ միասնական մոդել չկա: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր խորհուրդ պետք է համապատասխան իրավասություններ ունենա դատական իշխանության և առանձին դատավորների անկախությունը պաշտպանելու համար, որպեսզի դատավորներն ազատ լինեն որոշումներ կայացնելու հարցում՝ առանց անհարկի միջամտության թե՛ դատական իշխանության ներսից և թե՛ դրսից: (19-րդ կետ):

9. Դատավորների կարիերայի վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն ոչ թե

քաղաքական գործիչների կամ մյուս դատավորների հանդեպ հավատարմության պատճառով, այլ թափանցիկ ընթացակարգով և հնարավորինս օբյեկտիվ չափանիշների կիրառմամբ: Այդ որոշումները պետք է լինեն պատճառաբանված և հիմնված միայն արժանիքների վրա: Այն դատավորները, որոնք կհամարեն, որ իրենց իրավունքներն անտեսվել են, պետք է ունենան դատական կարգով վերանայման իրավունք (20-21-րդ կետեր):

10. Դատական խորհրդի անդամները պետք է ընտրվեն թափանցիկ ընթացակարգով, որը կնպաստի դատական խորհրդի և դատական իշխանության անկախ ու արդյունավետ գործունեությանը և թույլ չի տա քաղաքական ազդեցության, սեփական շահի կամ ծանոթությամբ պաշտոնի նշանակման որևէ ընկալում (27-րդ, 29-րդ, 31-րդ, 34-րդ կետեր):

11. Ի պաշտոնե անդամությունն ընդունելի չէ՝ բացառությամբ շատ փոքրաթիվ դեպքերի, և չպետք է ներառի օրենսդիր կամ գործադիր իշխանության անդամների կամ ներկայացուցիչների (28-րդ կետ):

12. Դատական խորհրդի նախագահը պետք է լինի անաչառ անձ: Խորհրդարանական կառավարման համակարգերում, որտեղ պետության նախագահը/գլուխն ունի միայն ձևական լիազորություններ, որևէ առարկություն չկա պետության գլխին որպես դատական խորհրդի նախագահ նշանակելուն, մինչդեռ կառավարման այլ համակարգերում խորհրդի նախագահը պետք է ընտրվի հենց դատական խորհրդի կողմից և պետք է լինի դատավոր (35-րդ կետ):

13. Եթե որևէ անդամ պետություն երբևէ վեթինգի գործընթաց նախաձեռնի, ապա դա պետք է իրականացվի անկախ կառույցի կողմից: Դատական խորհուրդները պետք է կարևոր դեր ունենան այդ գործընթացում՝ պաշտպանելով դատական իշխանության անկախությունը: Դատական խորհրդի վեթինգն ինքնին վերջին միջոցն է, և դրա կիրառման պարագայում գործընթացը պետք է իրականացնի անկախ մարմնի կողմից (22-23-րդ կետեր):

14. Դատական խորհրդի անդամների մեծամասնությունը պետք է լինեն դատավորներ՝ ընտրված դատավորների կողմից, ինչը կապահովի դատարանների և դատական ատյանների հնարավորինս լայն ներկայացվածությունը, ինչպես նաև սեռերի և շրջանների ներկայացվածությունը (29-րդ, 30-րդ կետեր):

15. ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս դատական խորհուրդների կազմում ընդգկել ոչ դատավոր անդամների, այդ թվում՝ քաղաքացիների, ինչը կապահովի հասարակության լայն ներկայացվածությունը՝ նվազեցնելով կորպորատիվիզմի վտանգը (29-րդ կետ):

16. Պետք է խուսափել խորհրդարանի կամ գործադիր իշխանության կողմից դատական խորհրդի դատավոր անդամների ընտրությունից: Խորհրդարանի կողմից ոչ դատավոր անդամների ընտրության պարագայում պահանջվում է որակյալ մեծամասնություն: Անհրաժեշտ է ներդնել համապատասխան մեխանիզմներ հնարավոր փակուղիները հաղթահարելու համար (31, 33-րդ կետեր):

17. Դատական խորհրդի անդամները պետք է նշանակվեն որոշակի ժամկետով և ունենան իրենց անաչառության և անկախության պատշաճ պաշտպանություն՝ արտաքին և ներքին ճնշումներից: Դատական խորհրդի անդամի պաշտոնավարման ժամկետը, սկզբունքորեն, պետք է ավարտվի միայն իրավահաջորդի օրենքով սահմանված կարգով ընտրվելու պահից (36-րդ կետ):

18. ԵԴԽԽ-ն ցանկանում է վերահաստատել դատական խորհրդի բոլոր անդամների պաշտոնավարման երաշխիքների կարևորությունը՝ որպես դատական խորհրդի անկախության շատ կարևոր նախապայման: Դատական խորհրդի անդամների լիազորությունները կարող են դադարեցվել միայն վարքագծի՝ ապացուցված կոպիտ խախտման հիման վրա այնպիսի ընթացակարգով, որը երաշխավորում է նրանց արդար դատաքննության իրավունքները (36-38-րդ կետեր):

19. ԵԴԽԽ-ն ցանկանում է ընդգծել անդամ պետությունների՝ դատական խորհուրդներին բավարար անձնակազմով և ֆինանսավորմամբ ապահովելու պարտականությունը (39-րդ կետ):

20. Դատական խորհրդի և իշխանության մյուս ճյուղերի հարաբերությունները պետք է հիմնված լինեն իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքի և ժողովրդավարական պետությունում դրանց համապատասխան դերերի ճիշտ ընկալման վրա (40-41-րդ կետեր):

21. Դատական խորհուրդները պետք է ակտիվորեն ընդգրկվեն իշխանության մյուս ճյուղերի, դատավորների միությունների ու քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ փաստաբանական պալատների և ՀԿ-ների ու լրատվամիջոցներ հետ բաց, հարգալից երկխոսություն մեջ (40-44-րդ կետեր):

22. Դատական խորհուրդները պետք է վճռականորեն հակազդեն առանձին դատավորների կամ ընդհանուր առմամբ դատական համակարգի վրա հարձակումների կամ ճնշում գործադրելու փորձերին (45-46-րդ կետեր):

23. Դատական խորհուրդն ու խորհրդի անդամները պետք է լիարժեք հանձն առնեն դատական համակարգում և դատական խորհրդում կոռուպցիայի դեմ պայքարի համապատասխան բոլոր քայլերին օժանդակելուն այնպես, որ պահպանվի իրավունքի գերակայությունը (47-րդ կետ):